ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/20-1»

ք. Երևան «12» «փետրվարի» 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Բաղալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության

չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն,

ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 756923 (յոթ հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր քսաներեք)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 156153 (մեկ հարյուր հիսունվեց հազար մեկ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պյրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային

օրվանից հաշված 25 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներն բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Մեծ Ծիածան» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի 1 | ք.Երևան, Ա.Ավետիսյան 78, բն. 3 |
| ՀՎՀՀ 02593108 | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| | Հ/Հ 11500-08878810100 |
| | ՀՎՀՀ 00103837 |
| Գ.Չթրյան------------------------------ | Ա.Բաղայան------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1

«12» «փետրվարի» 2018 թ. կնքված

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/20-1» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

## Ապրանքի

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | միավորի գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | մատակարարման ենթակա քանակը | մատակարարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 39836000/330 | Ավել | Մենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ | հ ատ | 625 | 18,750 | 30 | Սերաստիա-32 | 5 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 12 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 13 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 2 | 39831242/320 | Լվացքի փոշի | Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ԳՕՍՏ 25644-96: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն 300 գր զանգվածով | կգ | 550 | 11,000 | 20 | Սերաստիա-32 | 5 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 15 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 3 | 39831241/327 | Օճառ ձեռքի | չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված ,N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍՏ 28546-2002 ։ | հ ատ | 125 | 3,750 | 30 | Սերաստիա-32 | 6 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 11 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 13 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 4 | 33761100/331 | Զուգարանի թուղթ | Երկշերտ կամ եռաշերտ, լայնությունը 90-110սմ,, երկ. 65մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար։ Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարա-հի-գի-ենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": | հ ատ | 81 | 32,400 | 400 | Սերաստիա-32 | 80 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 160 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 160 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 5 | 39831280/316 | Ապակի լվանալու հեղուկ | Չափածրարված 0.5կգ զանգվածով։ Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված ,Մակերևույթաակտիվ միջոցների և Մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի | հ ատ | 214 | 12840 | 60 | Սերաստիա-32 | 60 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 6 | 39831276/325 | Զուգարանակոնքի մաքրող հեղուկ | Զուգարանակոնքի մաքրող հեղուկ պլաստմասե տարայով, քաշը՝ 1լ | հ ատ | 425 | 8500 | 20 | Սերաստիա-32 | 20 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | 25.12.2018թ. |
| 7 | 39831100/369 | Գորգերի մաքրիչ | Գորգ մաքրելու հեղուկ, պլաստմասե տարայով, քաշը՝ 0.5լ «Զոլուշկա», կամ համարժեքը. | հ ատ | 410 | 4,100 | 10 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 10 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 8 | 24911200/318 | Էմուլսիա | Սոսինձ ԿՓԸ-Ծ փայտի, թղթի, ստվարաթղթի, նկարների, ապակու ձեռապակու և կաշվի համար, ՁՃ2385-006-02954519-96, 96-440-08 տեսակի, 1կգ. տարայով: | հ ատ | 735 | 10,290 | 14 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 14 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 10 | 31685000/330 | Երկարացման լար | Չափսը: 4տ 3 մ : 110 Ա, 250 Վ միացման ժանյակներով , ԳՕՍՏ Ռ 51324.1-99 կամ համարժեք: Անվտանգությունն՝ ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 և 22 կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" Մակել կամ համարժեքը: | հ ատ | 1480 | 11,840 | 8 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 8 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 11 | 31686000/315 | Խրոց | Էլեկտրական խրոց 6,3/10 Ա, 250 Վ, ԳՕՍՏ Ռ 51322.1-99 և ԳՕՍՏ 7396.1-89, անվտանգությունը՝ ըստ 22 կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և ԳՕՍՏ 12.2.007.0-75 | հ ատ | 130 | 1,300 | 10 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 10 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 12 | 39812100/304 | Մաստիկա | Չցնդող նյութերի զանգվածային մասը՝ ոչ պակաս 30 %-ից, կաթիլանկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 75oC-ից, փայլեցնող հատկությունը ըստ փայլաչափ սանդղակի՝ ոչ պակաս 12-ից, թաղանթի ջրակայունությունը՝ ոչ պակաս 1 բալից, թաղանթի փոշեկուտակման հատկությունը՝ ոչ ավելի 0,8 մգ/սմ2-ից, չափածրարված 400 գ-ից մինչև 2500 գ տուփերով | կգ | 800 | 8,000 | 10 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 10 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 13 | 35820000/307 | Ապակիները լվալու ձող | Ցանկացած տեսակի, ապակի մաքրելու համար 1.5մ երկարությամբ: | հ ատ | 2150 | 43,000 | 20 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 20 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 14 | 19641000/316 | Աղբի տոպրակ | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք | հ ատ | 8 | 2,400 | 300 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 150 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 150 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 15 | 39224341/310 | Աղբաման | Ոտնակով, պլաստմասսայե, 12 դմ3 տարողությամբ, ՀՍՏ 124-2007 | հ ատ | 2500 | 10,000 | 4 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 4 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 16 | 30237111/306 | Էլեմենտ | Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար.1.5վ. AAA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով | հ ատ | 80 | 8,000 | 100 | Սերաստիա-32 | 20 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 80 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 18 | 44531160/308 | Պտուտակամեխ | Չափսը՝ 4 X 4սմ | հ ատ | 15 | 750 | 50 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Սերաստիա-32 | 50 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 21 | 44521120/315 | Դռան փական | Դռան ներդրովի փական բռնակով 7-17սմ | հ ատ | 3850 | 57,750 | 15 | Սերաստիա-32 | 5 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 10 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 22 | 44511250/307 | Հարթաշուրթ | Մեկուսիչ բռնակով, 20սմ երկարությամբ.1-ին տիպի՝ կարճ շուրթերով և 2-րդ տիպի՝ երկար շուրթերով ըստ ԳՕՍՏ 7236-93 | հ ատ | 1650 | 3,300 | 2 | Սերաստիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 2 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 23 | 44521100/311 | Փականի միջուկ | Դռան ներդրովի փականի միջուկ / երկարությունը՝8սմ/ | հ ատ | 900 | 9,000 | 10 | Սերաստիա-32 | 5 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 5 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 24 | 18421130/327 | Ռետինե ձեռնոցներ | Ձեռնոցներ ռետինից I տիպի՝ N2, N3 (XLչափի), հաստությունը՝0.6-0.9մմ, I I տիպի՝ N9, N10(XLչափի),հաստությունը՝ 0.2-0.4մմ, երկարությունը300 ոչ պակաս, ըստ ԳՕՍՏ 20010-93 | հ ատ | 164 | 13,120 | 80 | Սերաստիա-32 | 20 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 20 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 20 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 20 | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 25 | 39835000/312 | Հատակ մաքրելու ձողափայտ /փայտ/ | 1,5-2 մ երկարության փայտե կամ պլաստմասսայե, լաքապատված | հ ատ | 665 | 9,975 | 15 | Սերաստիա-32 | 5 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 5 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 5 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 26 | 39839300/310 | Գոգաթիակ | Մետաղյա, 1 մ երկարությամբ աղբը հավաքելու համար: | հ ատ | 1200 | 12,000 | 10 | Սերաստիա-32 | 5 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 5 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 27 | 39224330/314 | Դույլ | Պլաստմասսայե, 12 լ տարողության, ՀՍՏ 124-2007, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի | հ ատ | 580 | 3,480 | 6 | Սերաստիա-32 | 6 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 30 | 44163140/306 | Ջրի խողովակ | Ճկուն, երկարությունը՝2մ, չափը՝ 1/2 | հ ատ | 900 | 5,400 | 6 | Սերաստիա-32 | 2 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 4 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 31 | 42130000/318 | Ջրի ծորակ | 1 տեղանոց լվացարանի, ըստ ԳՕՍՏ 25809-96 | հ ատ | 1750 | 17,500 | 10 | Սերաստիա-32 | 2 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Սերաստիա-32 | 2 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 6 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 32 | 42130000/319 | Ջրի փական | Լվացարանի /ռուսական/, չափսը՝ 1/2 | հ ատ | 1380 | 9,660 | 7 | Մերձավորիա-32 | 2 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 2 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 3 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 33 | 31531100/338 | Հալոգեն լամպ | 220 Վ, 150վտ դրոսելային և ուղիղ միացման, երկկողմանի կոնտակտով, գործարանային փաթեթավորմամբ, արտաքին լուսավորության համար, ըստ նորմատիվ փաստաթղթի: Անվտանգությունը՝ ըստ 22 կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի | հ ատ | 1990 | 9,950 | 5 | Մերձավորիա-32 | | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 5 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 34 | 39831100/371 | Սպիտակեցնող հեղուկ /ժավել/ | Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ Նաիրիտ, ակտիվ քլորի պարունակությունը 90, 120 կամ 150 կգ/մ3 | լ իտր | 87 | 8,700 | 100 | Մերձավորիա-32 | 20 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 20 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 30 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 30 | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
| 36 | 39831100/372 | Մաքրող նյութեր /լամինատ մաքրող հեղուկ/ | 1 լ | հ ատ | 725 | 21,750 | 30 | Մերձավորիա-32 | 7 | 1-ին եռամսյակ 31.03.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 7 | 2-րդ եռամսյակ 30.06.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | 16 | 3-րդ եռամսյակ 30.09.2018թ. |
| | | | | | | | | Մերձավորիա-32 | | 4-րդ եռամսյակ 25.12.2018թ. |
